

դեր, որոնք կարճ ժամանակի մէջ կը մաք-
րեն երկիրը թշնամի տարրերէն: Եւ որով-
հետեւ գրաւուած վայրերն առ հասարակ
աւերուած էին, կը ձեռնարկէ վերաշինել:
Առ այդ իրեն առատ ատաղձ կը հայթայթէր
Խլաթի համար Աղեղեւազ⁶ իր առատ կիրով
ու փայտով, զոր բերել կու տար ջորիներով
եւ ուղտերով: Քամալեղէին իրեն յանձնուած
կարեւոր գործերը կատարելէ յետոյ կը մեկնի
Կարին եւ ապա Կոնիա սուլտանի մօտ: Անոր
հետեւ յանձն առնելով Սիւլաթի կու գան Զիւլայեղ-
դին, Փերվանէ Թաղեղէին եւ Մուսթաֆա
Սաղեղէին բաղմաթիւ պահակներով ու զի-
նուորներով տեղւոյն վրայ կարգ ու կանոն
հաստատուն պահելու համար: Գիւղացիներ
ու մեծ կալուածատէրեր կրկին իրենց եր-
կիրը կը վերադարձնեն: Սերմանացու եւ ար-
ջառ կը տրամադրեն անոնց, հարկերը կը
վերցնեն եւն: Այս կարգադրութիւններու
համբաւը կը հասնի մինչեւ Վրաստան, շատ
մը փախտականներ կրկին կը վերադառնան
իրենց ծննդավայրերն եւ կը սկսին վերաշինել
իրենց հայրենի բունը: Վերին հրամանատար
կը կարգուի Ախլաթի մէջ Սինանեղդին Գը-
մազ: Սա լսելով թէ Դատուանի (Tatvan)
մէջ կը գտնուի Կըրխան (Qyrhān) խուարիզմ
բանակով եւ երկիրն անոր վնասները ասպա-
տակներէն ապահով չէր, լուծ ծառայ մը եւ
ձիապան մը հետն առնելով Դատուան կ'եր-
թայ եւ տեսակցութիւն մը կ'ունենայ Կըր-
խանի հետ եւ կը յաջողի զայն համոզել,
ճանչնալ տալ սուլտանի վերին իշխանու-
թիւնը, փոխարէնը խոստանալով իրեն եւ իր
էմիրներուն այն գաւառները, որոնք կ'եր-
կարաձգուէին մինչեւ Կարնոյ սահմանները:
Այս իմաստով դաշնադրութիւն մը կը կնքուի
մէկ կողմանէ խուարիզմ իշխաններու Կըր-

⁷ Այս վայրին անունը բնագրին մէջ հաւանաբար
աղաւաղուած է, կը ներկայանայ մի քանի տարբե-
րակներով՝ Hatal - gur, 'Adilgevaz 'Adeğavaz,
Hatulğuz եւն: Դուրա նախնորած է Hotorgur սըր-
բագըն, որուն ի նպաստ արտայայտուած է մեծ. Հ.
ն. Ալիմեան, (տես Անդ էջ 179 ծն. Ե): Սակայն ա-
կընյայտի սխալ սրբագրութիւն մըն է: Քամալեղէին
կը գտնուէր Ախլաթ, եւ ուր սկսած էր շինարարու-
թեան: Ախլաթի եւ Խոտորջուրի հեռավորութիւնը
նկատի առնելով ոչ մի կերպով կարելի է հաշտեցնել
նման ենթադրութիւն մը: Muhtasarի մէկ ձեռագիրը
հարապատրէն պահած է ուղիղ ձեւը جادو 'Adel-
ğewaz), Ախլաթէ ոչ շատ հեռու, Սիւլաթի լեռն
ստորոտը, հին հայոց Արծկէ քաղաքը, ուր բաւարար
ատաղձ, կիրի եւ փայտի կարող էր գտնուի: Պէտք
չունէր շարաթներով հեռու Խոտորջուրէն զայն բերել
տալ:

խանի, Բարակաթի, Յըլան Նոդուխանի,
Սարուխանի եւ Քիւլլիւ Սենդգուլի եւ միւս
կողմէ սուլտանի զօրավարներուն միջեւ:

Յաջորդ օրն իսկ Կըրխան իր հետեւորդ-
ներով ճամբայ կ'ելլէ դէպի Էրզրում, իրեն
տրամադրուած երկիրները գրաւելու համար:
Կը հասնին Թոդուաի⁷, դաւարազեղ մարգա-
դետին մը կը տեսնեն իրենց առջեւ ուր կ'ըն-
կողմանին խոր քունի մէջ եւ ձիերն ալ կ'ար-
ձակեն արածելու համար: Թաթարական
հրոսակումը մը գիշերային յարձակում մը
կը գործէ Կըրխանի գունդին վրայ: Շատերը
կը սպաննուին, մնացածներն ալ լեռները կ'ա-
պաստանին: Լուրը կը հասնի Ախլաթ: Սահիր
գունդով մը կը փութայ Էրզրում: Յրուած
ու փախտական գունդերէն վերապրածները
կը հաւաքէ եւ կը միւլթարէ եւ գլխաւորները
Կըրխան, Բարակաթ, Յըլան, Սենդգուլ
կ'առաջնորդէ սուլտանին Կեսարիայի մէջ:
Թաղաւորն իւրաքանչիւրին մէկ մէկ քաղաք
կու տայ իբր աւատ, Կըրխանի՝ Երզնկան,
Բարակաթի՝ Ամասիան եւն (178-84):

1232 թուին Մալիք Քեամիլ Եգիպտոսի
սուլտանը կը ձեռնարկէ արշաւանքի մը դէպի
սելջուկեան երկիրները. իրեն կ'օժանդակէր
Խարբերդի Մալիքը, սակայն յաջողութիւն
չի գտներ: Կրկին կը վերադառնայ Եգիպտոս:
Խարբերդի մալիքը խորհելով թէ սելջուկեան
բանակը այժմ իր թիրախը պիտի ունենար
իր Խարբերդի իշխանութիւնը, կը խնդրէ
մալիք Քեամիլէն օգնական ուժեր: Որքան
ալ իր ցանկութիւնը կը զոհացուի, սակայն
տեսնելով թէ սուլտանին բանակին հետ պի-
տի չկարենար չափուիլ, խաղաղութեան
բանակցութեան կը մտնէ Քամալեղէին Քա-
մեարի հետ: Ներում կը ստանայ սուլտանէն
(184-190):

Քամալեղէին Քամեար այնուհետեւ իր
ուժերը կ'առաջնորդէ դէպի Խառան: Երկու
ամսուան պաշարումէ վերջ կը գրաւէ զայն:
Եւ երբ կը վերադառնայ Մալաթիա, կը լսէ
թէ ինչպէս մալիք Քեամիլը զօրքերը կրկին
գրաւած էին Խառան եւ սելջուկ պահակա-

⁸ Toğtab հաւանաբար աղաւաղուած է, ինչպէս
ձեռագրական տարբերակներ կը վկայեն: Խլաթէն դէ-
պի Էրզրում ուղին կ'առաջնորդէ Բասենի դաշտը,
որուն սկզբնաւորութեան կը գտնուի Թորդան, կը
թուի թէ ուղղելու է Tortan որուն մօտ է Oguz-
name f. 265 10 vo طوغطاب Դեւ, զոր ուղղելու է
طوغطاب ի, տես Անդ էջ 182 ծն. Ե:

զօրքն ու անոնց առաջնորդը գերեվարած
Եգիպտոս տարած էին: Ալայեղէին սուլ-
տան կը փախազէր փոխանակ կրկին Խառանի
վրայ քալելու, ձեռնարկել արշաւանքի մը
Ամիդի վրայ: Սակայն Ամիդ անառիկ քաղաք
մըն էր: Քամալեղէին կարծիքին համեմատ
միայն հնարաւոր էր երեք տարուան ընթաց-
քին զայն գրաւել: Առաջին տարին բոլոր
չըջակայ դաշտերն ու արտերն այրել ու աւե-
րել: Երկրորդ տարին խափանել պարէնի ու
օգնական ուժերու մուտքը: Երրորդ տարին
անշուշտ սովէն նեղուած անձնատուր պիտի
ըլլային:

Այս ծրագիրն Ալայեղէինի հաւանու-
թեան չ'արժանանար: Փերվանէ Թաղեղէին,
Շարաֆեղէին Երզնջանիի որդին, որ նախան-
ձորդէր Քամալեղէինի փառքին, կ'առաջարկէ
սուլտանին իրեն յանձնել այդ զօրքը, զոր
կը խոստանար վեց ամսէն գլուխ հանել:
Սուլտանէն կը յանձնուի Ամիդի արշաւանքն
իրեն: Սակայն ոչ մէկ կերպով կարող կ'ըլ-
լայ յաջողութիւն մը ձեռք բերել: Եւ որով-
հետեւ Թաղաւորն անպատճառ կ'ուզէր դա-
ւել Ամիդ բերդը, հրամանատարութեամբ
Սահիր Շամսեղէին Իսպահանիի նոր բանակ
մը կ'ուղարկէ որ նոյնպէս չի յաջողիր իր
ձեռնարկին մէջ: Յաջորդ տարին մինչ թա-
ղաւորն անձամբ կ'ուզէր գործը ձեռք առնել,
կը վախճանի 31 Մայիս 1237ին (190-199):

(Շարուակելի.)

Հ. Պ. ՏԵՐ-ՊՈՂՈՍԵԱՆ

ԽԱՐԲԵՐԴԻ ՎԵՆՔԵՐԸ

Խարբերդի նահանգին սահմանները են՝
«Հիւսիսէն Էրզրումի եւ Տէրսիմի կուսակա-
լութիւնները, արեւմուտքէն Տիգրանակերտի
կուսակալութիւնը եւ անոր կցուած Բալուի
գաւառակը (գաղա), հարաւէն Հալէպի կու-
սակալութեան կցուած Ուրֆայի գաւառը
(սանճազ), արեւմուտքէն Սվադի եւ Հալէպի
կցուած Մարաշի սանճազները եւ Ալալիթի
ու Այնթապի գաղանքները» (Վահէ Հայկ,
Խարբերդ եւ անոր ոսկեղէն գաղաւ, էջ 71):

Ա.

Ա. Կ. Ն. Ա. Յ. Վ. Ա. Ն. Բ. Ը.

1. ԱՌԽԱՅ ՎԱՆՔԸ

Թէեւ այս վանքը Ակնայ շրջանին մէջ կը
դրուի (Էյերիկեան, Բնաշխ. Բոքն. Ա. էջ
28), բայց կը խորհիմ թէ Տիգրիկի Աւթմայ
վանքին հետ նոյնը պիտի ըլլայ — արդէն
Տիգրիկ եւ Ակն իրարմէ շատ հեռու չեն եւ
եկեղեցիներու կամ խորաններու մէկու
անունն ալ (Ս. Աստուածածին) կարծես այդ
կը հաստատէ:

Ծանօթ է սա Յիշատակագրութենէն

«Գրեցաւ սա (Յունաց շարահնոց) ձե-
ռամբ եղիկելի սուտանուն կրօնաւորի Պապա
Իսմիլի ի վանքս, որ կոչի Նորվանք ընդ
հովանեաւ ամենասրբուհի Աստուածածնի եւ
մեծ եւ ահաւոր սուրբ Հրեշտակապետացն
մեծ եւ ահաւոր սուրբ Հրեշտակապետացն
Միխայէլի, ի վանքս որ կոչի Աթմա, ի ուրբ
ժէորժու եւ սուրբ Աստուածածնի (Գրեցաւ
ի թուիս Հայոց Ռ. Ա. տարին (1582) կուս
էր վերադրին, իմ հայրապետ Ղնատիոս
մեարապոլիտն» (Բաղմալէպ 1904 էջ 328):

2. ԱՅ-ԵՈՐԿԻ ԿԱՍ Ս. ԳԵՈՐԳԻ ԿԱՍ ՎԱՆՔ

Ակնի վանք գիւղը ունեցած է հայ-հո-
ռոմ բնակչութիւն եւ անոր եկեղեցին եղած
է Այ-Եորկի — Ս. Գէորգ: Հաւանական կը
թուի թէ այս եկեղեցին հին ատեն վանք մը
եղած ըլլայ եւ գիւղը անկէ առած ըլլայ իր
անունը² (հմտ. Պարտուեան, Ակն եւ
Ակնցիք, էջ 123, Ճանիկեան, Հնութիւնք
Ակնայ, էջ 58, Թորոս Աղբար Ա. էջ 124 եւ
Քէչեան, Ակն եւ Ակնցիք, էջ 50):

3. Ս. ԳԵՈՐԳԻ ԱՆԱՊԱՏԱՆ ԵՒ Ս. ԳԵՈՐԳԻ ԿԱՍ ԱՐՄՏՈՒ ՎԱՆՔԸ

Կամարակապ գիւղի Ս. Գէորգ փոքր
եկեղեցին կամ մատուռը կոչուած է Անա-
պատ³: Արդեօք վանականներու կամ ճգնա-

¹ Այս Յիշատակագրութեան նօթքը նաեւ Ակնայ
կողմը կը խոնարհեցնէ, նկատելով որ այդ տեղերը
հայ-հոռոմներ կային եւ անուններն ալ յունական
դրուած են:

² Ունէր Ս. Սարգիսի նուիրուած մատուռ մը:
Սիրուած ուխտատեղի էր:

³ Արսլանեան Ս. Գեորգ կամ Արմատ վանքի
մասին, որ շրջապատուած է լեռնաշղթայով, ունի սա
կարեւոր տեղերը. «Ս. Գէորգի շարաթացեալ Սար-
մուսիսի լեռնասարին, բլուրին եւ բլրադաշտակին
կուշտին թէ քղանքին բունած եւ Խարասթիին բա-

ալ Ամբրիուս պատկանող Սպիրտակ Աղբիւրին անունը փոխուած է» (Բախտիկեան, հրատ. Ոսկեգետակ, Բ. էջ 195-6, հմտ. Արաբկիր, էջ 31 եւ 38) :

Արաբկիրի առաջնորդները կամ Ս. Աստուածածնի եւ կամ Ս. Յակոբայ վանքերու մէջ կը նստէին (անոնց թերի դաւադանազիրքը հմտ. Ոսկեգետակ, Ա. Պէյրուք 1945, էջ 56-7) :

Ուսուցիչ Եղիա Արգարեանի «Զարդ» գրութեան մէջ կը նկարագրուի թէ ինչպէս Ս. Յակոբ եկեղեցւոյն Գրիգոր վարդապետին խաղամանալ կ'առաջարկուի եւ թէ ան ինչպէս կը մերժէ ու կը նահատակուի—աբրար (Ոսկեգետակ, Բ. էջ 74-5) :

Երբ հասան Սուրբ Յակոբ եկեղեցին, Ուրախութեամբ զանգակը հնչեցին, Գրիգոր վարդապետին կանչեցին, Ու խաղամանալ առաջարկեցին :

Պաշարուած հայ հինգ հարիւր անձեր Ամէն տեսակ զէնք իւրեանց ձեռքեր կամ պիտի ընդունէ եթէ ոչ մահ է. Ամէն հարուած իւրեանց համար է :

Շատ ստիպեցին կրօնքէն դառնալ, Բայց ան Յիսուսի սիրով էր վառեալ Բազում չարչարեալ, բազում նեղեալ, Եւ նա Աւետարանով է գինեալ :

Ամէն վայրկեան կը խաչակնքէր, Իւր ստեղծիչը կը փառաբանէր, Եւ վերջին օրը այսպէս կանցունէր : Ու կանգնող թշնամին կը դարձացունէր :

Երբ վայրագ գազանք յուսահատեցան Ամէն ալ միասին բարկացան : Ձեռքերն ու ոտքերը շուտ մը կապուեցան Գլուխը սեմին վրայ դրուեցաւ :

Սուրբ վգին վրայ դարձեալ կը հարցունեն, Որ խաղամանայ որպէսդի աղատեն. Բայց ասաց. «Ձեր խօսքերն ոչինչ են, «Այս չաչարանքներն ինծի համար փառք են» :

Այնժամ գլուխը սեմին վրայ դրուեցաւ, Շուտ մը հեռացաւ սուրբ հարուածէն, Սա խօսքերը ելաւ իւրեան բերանէն. «Սովորած եմ ես իմ Փրկչէն» :

Երբ իւրեանց չար կամքը յաղեցուցին, Տանց մէջ հաւաքուած անձանց քով դացին իսլամանալին առաջարկեցին. Բայց իւրեանց յոյսը ի դերեւ հանեցին...

5. Ս. ՍԱՐԳԻՍԻ ՎԱՆՔԸ

Մաշկերտի վանքն է Ս. Սարգիս, որ կը գտնուի Եփրատի ափին : Ունի հին կառուցուածք : Ամէն տարի Ս. Սարգիսի տօնին, ձմրան ցուրտ ու բուքին տեղի կ'ունենայ անոր ուխտաւորացութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն նոյն իսկ շրջանին Քիւրտերը : Շատեր ծոմ կը պահեն եւ կ'ըլեն Քարտակ կամ Քոստակ լեռնակին բարձունքը, ուր է վանքը եւ հոն իրենց մատաղ կը մատուցանեն եւ ապա ծոմը կ'աւրեն (Բախտիկեան, Արաբկիր, էջ 141-6 եւ Ոսկեգետակ, Գ. էջ 182-3) :

Ս. Սարգիս ուխտատեղի մըն ալ կայ Ղօլշուկ գետին եղերքը : Ձեմ կարծեր որ մենաստան եղած ըլլայ (հմտ. Բիւզանդիոն 1900, Թ. 1019, հմտ. նաեւ Ծագի Ս. Սարգիս, Բախտիկեան, Արաբկիր, էջ 135) :

6. Ս. ՓԻԼԻՊՊՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՎԱՆՔԸ

Արաբկիրէն հետիոտն մէկ ժամ հեռու, կառուցուած իրերէ թէ այն տեղը ուր Փիլիպոս Առաքեալը գլխատուած ըլլայ : Հոյակապ եւ հարուստ վանք եղած է եւ բազմաթիւ միաբաններ ունեցած, ինչպէս աւանդութիւնը կը հաղորդէ : Շատոնց կործանած եւ քանդուած, սակայն երկար ատեն իրերէ ուխտատեղի ծառայած (Դաւիթ Բէկ, Արաբկիրի գաւառաբարբառը, Վիեննա 1919, էջ 8 ծն. 1)² : Հողերուն տիրացած են Թուրքերը (Թորոս Աղբար, Ա. էջ 273) :

7. Ս. ՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ

Ս. Փրկիչ վանքը որ նմանապէս Ս. Նշան կոչուած է, կը գտնուի Ոսկեգետակ գետի բերանը, ժայռի մը տակ, Ծագ գիւղի մերձ : Շատոնց շարաթացած վանքերու շարքին մէջ մտած (Բիւզանդիոն 1897, էջ 443 եւ Բախտիկեան, Արաբկիր, էջ 134) :

Ձեռագիր մը, որ գրուած է 1446ին Արաբկիրի մէջ, ունի սա յիշատակագրութիւնը. «Ի մեծ հռչակաւոր ուխտն Փրկչին,

² Հմտ. Բախտիկեան Ս. Արաբկիր եւ շրջակայի գիւղերը, Պէյրուք 1934 էջ 64 եւ 130-33) :

ղոր Տէր ի կերպարանս երեւեալ եղեւ եղջերաւորի Ապլակիտոսի եւ խաչ սառնանման ի յեղջիւրս եւ եղեալ ձայն ի խաչէն առ Ապլակիտոս եւ ասէ, Ձի՞ հալածես զիս : Եւ նա դարհուրեալ ի տեսնէ մկրտեցաւ եւ անուանեցաւ Ստաթէոս եւ շինեաց գտեղին վանս հռչակաւոր եւ անուանեաց գտեղին Փրկչի վանք» (Ակիւնեան, Հաւաք. Յիշատ. Հ. Պատուեանէ — այս Ձեռագիրը ժամանակ մը Կ. Պոլսի Անտոնեանց մօտ եղած է — հմտ. նաեւ Ալիշան, Հայաստանում էջ 545 եւ Կիւլէսէրեան Բ. եպ. Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ, էջ 47) : Որքան ալ այս Ձեռագիրը գրուած է Արաբկիրի մէջ, սակայն կը գծուարիմ այս վանքին մերձեցնելու :

8. ՔՈՒՇՆԱՅ ԳԻՒԴԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

«Քուշնայ գիւղը, Եփրատի համող իր զուտ հայաբնակ տուներով, կառուցուած է, Եփրատի ափին : Ձինքը շրջապատող իւր ծառաստաններու զերկը բիւր ծիրանիններու, նոնենիններու, նշենինեւ երկնեանդ ծաղիկներուն պսակը գլխին պճնուած գեղատեսիլ հարսի մը երեւոյթով կը հպարտանար Աստուածամօր նուիրուած ուխտատեղի վանքը սարին կոթնած : Ամէն տարի Ս. Աստուածածնայ տօնին, քաղաքէն ու շրջակայ գիւղերէն բազմահազար Հայութիւն ուխտի կ'երթար հոն : Քուշնայի հիւրասէր ժողովուրդը սիրով կը հիւրասիրէր ուխտատեղիներ տունէն ներս» (Բախտիկեան Ս. Ոսկեգետակ Բ. Պէյրուք, 1946, էջ 219, նոյնը՝ Արաբկիր էջ, էջ 149) :

ԽԱՐԲԵՐԳԻ (ՇՐՋԱԿԱՅՔԻ) ՎԱՆՔԵՐԸ

Գ.

1. ԱՐԳԻՄԱՅԻ ԿԱՍ ԶԱՐԳԱՐԻՉԻ ՎԱՆՔԸ

Խարբերգէն հետիոտն վեց ժամ հեռու իջմէ եւ Զարգարիչ — ասկէ կոչուած Զարգարիչի վանք — գիւղերու մերձ, Մաստառ լեռան կուրծքին հանգած է Արգիմաէի վանքը, — աղաւաղումով Ապտըմուսէի վանքը, — անուանուած է : Շատ սիրուած ու հռչակաւոր անուանուած է : Շատ սիրուած ու հռչակուած է եւ սակայն գծախտաբար անոր շինութիւններու մանրամասն նկարագրու-

թիւնը ընող չէ եղած, ինչպէս նաեւ անոր պատմութիւնն ալ շատ բան չենք գիտեր : Տաճարը նուիրուած է Ս. Արգիմաէի նահատակին եւ Ս. Աստուածածնի : Շատոնց անխնամ ձգուած է, թէեւ երբեմն Կարապետ վանահայրը, որ մեռած է 1889ին, ձեռնարկած է վերաշինութեան (Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 191, Սրուանձտեանց, Բիւզանդիոն 1900, Թ. 1127 եւ 1905 Թ. 2772, Արեւելք 1891, Թ. 2380 եւ 1890 Թ. 2063, այս եւ Խարբերգի միւս վանքերու մասին՝ Բիւրակն 1899, էջ 282, Արեւելեան Մամուլ 1884 էջ 115, Հայրենիք 1888, էջ 324) :

Վ. Հայկ կը գրէ «Այս վանքը Զարգարիչի անունը կը կրէր, որովհետեւ աւելի մօտ էր համանուն գիւղին եւ իզմէի վանք կ'անուանուէր անոր եկեղեցիով կառավարուելով : ... ուէր անոր եկեղեցիով կառավարուելով վանքին անունը կը թուի ըլլալ պարսկական կամ ասորական : Եփրատի շինութիւնն ալ կը կրէ նոյն նկարագիրը : Օրմանեանի տեսութեամբ աւելի պարսկական է եւ կ'երթայ թեամբ միջին Ե. դար : Վանքը առհասարակ պարսկական մէջ, ունէր երկու նուած է պարսկական մէջ, ունէր երկու եկեղեցի, մեծ եւ փոքր : Մեծը քանդուած էր 70-ական թուականներու պատահած երկրաշարժով մը, իսկ փոքրը կը մնար վնասուած, բայց յետոյ վերանորոգուելով կը ծառայէր հանրութեան : Վերանորոգիչն եղած է Տէր Մարկոս ք. Տէր Մարկոսեան» (եւ ապա Տէր Մարկոս ք. Տէր Մարկոսեան) (Խարբերգ եւ իր ոսկեղէն դաշտը, էջ 890-91 եւ ձիգմէճեան, Խարբերգ եւ իր դաւանները, էջ 64) :

Զարգարիչի կամ Իզմէի վանքը Խարբերգի հարուստ վանքերէն է եւ ունեցած 24 թեմ եւ բաւական շատ հող, սակայն տարի-տարի ընթացքին զանազան պատճառներով անոնցմէ զրկուած : Եղած է սիրուած ուխտատեղի (Երեւանեան Գ. Պատմութիւն Զարգարիչի Հայոց, էջ 282, Վահէ Հայկ, Խարբերգ եւ իր ոսկեղէն դաշտը, էջ 572 եւ 890-891, Նաթանեան, Արտօսը Հայաստանի, էջ 126-7, ուր Խարբերգի միւս վանքերու մասին եւս, Բախտիկեան Ս. Ոսկեգետակ Գ. էջ 384) :

Ներսէս Շնորհալիի Ս. Իւզոյն վկայականին հաստատողներէն է «Քորեպիսկոպոսն Աստուածածնայ եւ Արգիմաէի երկուց նորաչէն վանուց» (կարեւոր է այս), «որ

— արտագրել կը հրամայէ (Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Ա. էջ 418) :

Դատեմի վանքը ստուգիւ եղած է «Մեծա-
հռչակ ուխտ», ունեցած է քորեպիսկոպոս,
ինը գիւղ թեմ եւ շատ կալուած ու Ձեռա-
գիրներ (Հմմտ. Թորոս Աղբար, Բ. էջ 89 եւ
349, Արաքս, 1888, էջ 35-7, Բիւզանդիոն
1905 թ. 2772, Արեւելք 1890, թ. 2063, եւ
նոյնը՝ 1880 թ. 525, Նոյեան Աղանի 1853,
թ. 48, Մասիս 1880 թ. 2748, Ծաղիկ (Կ.Պ.)
1891, թ. 47, Քնար 1902 էջ 220, Հայրենիք
1888, թ. 3298, Արեւելեան Մամուլ 1884, էջ
115, Նաթանեան, Արտուր Հայաստանի, էջ
126-7, Ճիգմէճեան Սարգիս, էջ 65, Վ.
Հայկ, Սարգիս, էջ 579 եւ 910, Բախտի-
կեան Ս. Ոսկեգետակ Գ. էջ 384 եւ շատ ըն-
դարձակօրէն Միսիթարեան Գ. Մեր գիւղը,
Պոսթըն 1958 էջ 8-9, 11-8 եւ 24-26 եւ 98-9) :

Հոս կը գնենք Սարգիսի առաջնորդնե-
րու ԺԶ. դարու կէսէն սկսած գաղաղանա-
գիրքը, զի անոնք որոշ իշխանութիւն եւ
իրաւասութիւն ունեցած են. (նաեւ գեղա-
վարութիւն — թէեւ երբեմն) սոյն նախնա-
գիրն մէջ գտնուած վանքերու վրայ :

Պողոս եպ. 1551

Մկրտիչ Վ. 1590

Մատթէոս եպ. 1627

Դաւիթ եպ. 1660

Աբրահամ Վ. Բէշքիւթիւր 1751-65

Պողոս Վ. 1767

Իսահակ եպ. առջ. Սարգիսի եւ Դատ-
մայ Ս. Աստուածածին վանքի 1775 (Դիւան
ԺԲ. էջ 460) :

Աբրահամ եպ. Բէշքիւթիւր 1778

Փիլիպպոս եպ. 1798-1802

Գէորգ Վ. 1845-47

Յարութիւն Վ. Վեհապետեան 1856-58

Գէորգ Վ. Սարգիսի 1878-9

Արիստակէս եպ. Դերձակեան 1859-64

Պողոս Վ. Բագրատունի 1864

Աբրահամ Վ. 1865

Պետրոս Վ. Բագրատունի 1867

Երեմիա Վ. Տէր Սարգիսեան Տէվկանց
1867-8

Պետրոս Վ. Բագրատունի 1868-75

Սարգիս Վ. Վարդապետեան 1875-76

Կարապետ Վ. Բագրատունի 1876-9

Սարգիս Վ. Վարդապետեան 1879-80

Յակոբ եպ. Ճգնաւորեան 1880-87

Դեռնոյ եպ. Շիշմանեան 1886-90

Յովհաննէս քհ. Գրիգորեան 1890-92

Պետրոս Վ. Բագրատունի 1894-1901

Եղիշիկ Վ. Գալիաքճեան 1902-1904

Սարգիս Վ. Պէհրիկեան 1903-6

Գէորգ Վ. Ասլանեան, Բինկեանցի 1909-
1910

Պսակ Վ. Տէր Սորենեան 1911-15

Նշան քհ. Մարգարեան 1918-1920

Գիւտ եպ. Միսիթարեան 1920-23

(Վահէ Հայկ, Սարգիսի եւ իր ոսկեղէն դաշ-
տը, էջ 535-549) :

7. ԽՈՒՆԵՆԻ ԿԱՍ Ս. ԳԵՈՐԳԱՅ ՎԱՆՔԸ ԿԱՍ
ՄՈՎՍԱՎԱՆՔԸ

Սարգիսի արեւմտեան — հիւսիսային
կողմը եւ անկէ բաւական հեռու կը գտնուի
Սուլէ կամ Ղուլէ կամ Գուլէ գիւղը, որուն
վանքն է Ս. Գէորգ, որ շատ ստեղծ յիշուած
է գիւղին անուան կցուած, ուրիշ համայնու-
ն վանքերէ զանազանութեամբ համար : Հիմնաւած
է գիւղին արեւելեան կողմը, Մեծ Հողան
լեռան ստորոտը եւ օժտուած՝ առողջարար
օդով ու առատ ջրով :

Հ. Ինճիճեան կը գրէ «Սուլէ վանք»
Յայտ վայրի Սուլուկա կամ Սուլա ի մօտ
անդ զաւտավայրին է մենաստան կոչեցեալ
Ս. Գէորգ, որ եւ կոչի Սուլա կամ Սուլէ-
վանք. տաճար սորա փոքրիկ, բայց նման է
ձեռով սրբոյ Յակոբայ, որ յԵրուսաղէմ»
(Նոր Հայաստան, էջ 237) : «Արաքս» ի նկա-
րադրութեան համեմատ մատուցը գեղեցկա-
շէն է» (1888 էջ 36) : Իսկ Սրուանձտեանց կը
գրէ «Նայելով միւս վանքերու այս վանքը՝
քիչ մը կը նմանէր վանքի : Տաճարը Ս.
Գէորգ անուամբ եւ 14 կոոր սենեակ ունի,
հին եւ նոր բաւական կոկիկ» (Թորոս Աղբար
Բ. էջ 90) : Տաճարը 60 ոտք երկար, 30 ոտք
լայն էր եւ ունէր չորս բուրձնաձեւ եւ միա-
կողմ քարէ հսկայ սիւներ. պատերը եւ
առաստաղը՝ քարէն : Սորանին ձախա-
նաքարի մը վրայ փորագրուած է. «Աստ
հանգչի Գէորգ Մեծն Քսով, որ հալածեալ
Լէնկթիմուրէ եկեալ ի միաբանութիւնս եւ
հանգեալ ի Տէր» (Վահէ Հայկ, Սարգիսի,
էջ 863-4) :

Ս. Գէորգ եկեղեցւոյ ճակատը կայ
«Լոյս աղբիւր, Յանուն Յուսիկ անտեսի
շինեալ է թուին Եօթն հարիւր յիսնի : Կրկին
նորոգեալ յԱրամեան սերէ, Գէորգ ծայրա-

գոյն ուարունապետէ, խնդրէ վանահարցը
պահել հաստատուն, զի մի լինիցի Սնիի
հանգոյն» (անդ, էջ 866) : Նորոգուած է
1882ին :

Բակին մէջ կան թրքական շիրիմնաքա-
րերուն նման մահարձաններ. ոմանց վրայ
կան զրութիւններ. «ՉԳ. (1324) Յիշատակ է
Միքայէլ վարդապետին» :

«Թուական ԶԳ. (1254) Յիշատակ է Ստե-
փան վարդապետին» :

«Կամաքն Աստուծոյ նուազ Սիմէոն
վարդապետ եւ միաբան Ս. Գէորգայ շինե-
ցաք զաղբիւրս» :

«Այս է տապան հանգստեան տէր Արիս-
տակէս զրոյ աշակերտի, որ փոխեցաւ ի
Քրիստոս» (Թորոս Աղբար, Բ. էջ 354,
Հմմտ. Դատեմի վանքը) :

Սուլէվանքի մէջ երեւան կու գայ Ներ-
սէն Շնորհալիի օրհնած միւռնոյն փոքրիկ
շէն մը՝ մագաղաթէ վկայագրով. «Օրինակ
վկայականի Ս. Իւղոյն ի մագաղաթեայ
բնագրէ : Արդ ողորմութեամբ Աստուծոյ
կառուցաւ սուրբ գերեզմանս Գէորգ զաւրա-
վարին ձեռամբ ծառայ ծառայիցն Աստուծոյ,
սուրբ հոգ Միքայ սուտանուն արքեպիսկո-
պոսիս, որ շնորհեաց անարժանիս բարեպաշտ
Մեքաւն պարոն իշխան, որ գանձուց ար-
քայի Լեւոնայ եւ Հեթմայ առեալ է ի պա-
տուկացն Յունաց, որ ես տեսի կեք(ե)ալ եւ
վկայեմ եւ ճ. դահեկան պարգեւեաց, որ նո-
րոգեցաք եկեղեցիս եւ փոխեցաք անոյն (sic)
Ս. Գէորգ, որ էր Մովսէս, յիշատակ Մեքաւ
ամիրայի թագաւորազն, այսպէս թաղեցաք
տաան կրանաւորաւք եւ քառասուն աւր պա-
տարաւաւք աջ կողմն մեծ խորանիս, ուր կայ
յիշատակն Մեքաւնին եւ շէն մի սուրբ իւղ,
որ սա Ներսիսի Կլայոյ Հռամկլայոս Ս.
Հայրապետին աւրհնած սուրբ իւղն է, որ
բեռն երկրորդ Հեթմայ փախուցեալ է
Հռամկլայոս, յորժամ Արշաւ ամիրայն Եգիպ-
տոսի կործանեաց զկաթուղիկոսարանն
Կլայոս, եւ անտի հասաւ արքայն Հեթումն եւ
ձեռամբ Մեքաւնի առ սուրբ ուխտն, որ եւ
անաք կնիք Ներսիսի սուրբ վարդա-
պետին ի վերայ եւղոյս եւ կնքեցաք
եւ փոքրիկ մատուռ եղաք գերեզման
զաւր Ս. Միւռնոս այս եղաւ յիշատակ
Ս. Ներսիսի Կլայեցուն եւ եղբարն
Գրիգորի եւ փոքր մաս մի Ս. Կարապետի
կնքեցաք, Կիրակոս եպիսկոպոս Արապգր

քաղաքին, Մատաթիա եպիսկոպոս Մելիտի-
նու եւ քորեպիսկոպոսն Աստուածածնայ եւ
Արքեպիսկոպոսն Երկուց նորաշէն վանուց, որ
հրամանաւ Մեքաւն ամիրային նստին Սար-
բերդու դաշտն եւ միայն խրատեն զժողո-
վուրդն. մենաստան դաշտիս է միայն Ս.
Գէորգ որ ունի հինգ հազար տուն ժողովուրդ
եւ չորս եկեղեցիս Սարբերդու բացի Ասոր-
ւոց, որոյ քաղաքիս եւ դաշտիս Սարբերդու
ոսկից մոխիրն առաջնորդ ես եմ, բայց նոյն
վեմ ես եւ երկու եպիսկոպոսն եւ Գէօ քաւր
եպիսկոպոսն որդիս ով որ բացցէ սուրբ շի-
րիմս ԳէօՒ եւ զողապցէ կամ այլ տեղ տար-
ցէ, նոյնվեալ լիցի, եւ թէ վիճակն խնայէ,
բաց ի վեց գիւղիցն, որ Ս. Աստուածածնայ
եւ Արքեպիսկոպոսն եւ պարոն Մեքաւն եւ գեղե-
ցիկ կարգադրութիւն մեր խափանեցէ մահու
եւ զժողոց արժանիս լիցի : Անուն Հաւրն եւ
Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն. կնիք Գէորգ
եպոս. կնիք Միքայէլ եպոս. Չ. Գ. կնիք Կիրա-
կոս եպոս. կնիք. Կիրակոս եպոս. կնիք Ներսէս
կոս եպոս. Ո. Ժ. է., կնիք Հեթում Ո. Հ.
կնիք Միքայէլ եպոս. Չ. Գ.» (Թորոս Աղբար,
Բ. էջ 351-3, Տաշեան, Մայր ցուց. էջ 1040-
1041, ուր ստորագրողներէն մէկն ալ է «Գէ-
որգ վարդապետ միաբան Ս. Գէորգայ վա-
նիցն Սուլ, երկրիս Սարբերդու, իսկ նախորդ
գրութեան տակ «Յամի փրկութեան մերոյ
1843ին մուտն ամսոյս Ապր. ի սուրբ ուխտն
Գէորգայ Շուլէ վանք կոչեցեալ. Հմմտ.
սոյն շէն մասին նաեւ Նոյեան Աղանի 1853,
թ. 48 եւ Ալիշան, Ներսէս Շնորհալի եւ պա-
րագայք իւր, էջ 454) : Շատ կասկածելի
վկայագիր է — իմ կարծիքով — նկատելով
մանաւանդ լեզուն :

Թէեւ կ'աւանդուի թէ Ս. Գէորգի վանքը
թաղէս առաքեալէն հիմնուած ըլլայ (Բիւ-
զանդիոն 1905, թ. 2772) եւ այսպէս Հայաս-
տանի հին վանքերէն մէկը ըլլայ, սակայն
իրականին հին աղբիւրներ անոր
մասին տեղեկութիւն չունին, զի գոյութիւն
չունէր, տարբեր հարց՝ եթէ նոյն ըլլայ
Մովսէսավանքի հետ (Հմմտ. վարդ) :

Ս. Գէորգի մասին 1443 թուականէն ու-
նինք սա երկար Յիշատակագրութիւնը.
«Յիշատակ է սուրբ Աւետարան Զմչկաղէկցի
Գէորգ եպիսկոպոսի, որ գրեցի, անարժան
առաջնորդ սուրբ Գէորգայ գերեզմանի Ղու-
լավանից, որ զարգարեալ է հանգուցեալ
Միքայէլ եպիսկոպոս վասն երկիւղին Լանկ

Թաճուրէն, սուրբ գերեզմանիս միաբանք
Թագուցեալ ի Ծով դղեակ եւ վասն խարտի-
շարու սուրբ Կարապետին եւ Կարմիր վա-
նուց եւ սիրով յորդորեալ ամենայն միաբա-
նից կրկին ժողովեցի ինն միաբանս եւ պայ-
ծառացուցաք սուրբ աթոռս եւ երկու ագա-
րակ գնեցաք գիւղին մեր եւ դաշտն մեծ
Ագարազն հարիւր փարայ եւ միւսն քսան իմ
հալալ վաստակէս եւ բաց վանքիս մերձեկայ
հաշէ որ օծեալ քար դրաք, ի ներքոյ վա-
նացս ութն ըրպէ եւ հիւսիսային ճանապարհ-
ին սուտ Լոյսալի գիւղն որ հեռի է կէս
ժամ եւ անտի հողադաշտ լեռն յարեւմտից
կուսէ մինչեւ ի ճանապարհն խորբերդու...
Պարոն Արէլն Թաղարցի, կուր էր աշօք եւ
եկն ուխտ եւ բացան աչք նորս, հարիւր եւ
վաստուց վանացս հոգն (Գէորդ եպիսկոպոս-
սըն) որ տիրեալ էր Լուսալի... Ասացէք
Աստուած ողորմի նահատակ եղբօրս տէր
Յօհաննիս... Թաղեցաւ ի մատուռն Ս. Աս-
տուածածնայ եւ բազում հիւանդ բժշկի,
վայ ինձ բթամտիս, որ եղբայրն եմ նորս
եւ այս գերեզմանիս առաջնորդ եմ. գրեցի
այս բանս սակաւ, այլ եւ գրեալ եմ ամենայն
անցք, որք ընդ իս անցին, յիշատակագրու-
թիւն Միքայէլ արքեպիսկոպոսին եւ միւս
առաջնորդաց, որ յառաջ քան զմեզ, իսկ այս
բանս սակաւ գրեցի թուին Հայոց ՊՂԲ»
(1443 Նոտարք էջ 131, Թորոս Աղբար Բ. էջ
349 - 50, Ռաչիկեան ԺԵ. դարի հայ Զեռ.
Յիշատ. Ա. էջ 558): Այս՝ Յիշատակագրու-
թիւնն է Աւետարանի մը, որուն մէջ Յով-
հաննէսի Աւետարանին «Ի լուսանցն» կայ՝
«Մեսրոպ վարդապետ հիմնադիր սուրբ,
պաշտպանութեամբ իշխանաց Ծով դղեկու
շինեցի մենաստանս... Թուին Հայոց ՌՃԾԳ
յիշենշիք Մաղաքիա» (Թորոս Աղբար, Բ. էջ
351):

Ինչպէս կը տեսնուի կարեւոր Յիշատակապրութիւն մըն է այս, որ վանքին պատմութեան վրայ բաւական լոյս կ'արձակէ, աւելի լուսարձակ եղած են ակնարկուած գրութիւնները :

Յայտնաւորք մը կը գրուի «Ի թվ. 210.
— 1482 — Ի Խարբերդի վանա Խուրայու յա-
ռաջնորդութեան սուրբ ուխտիս Գրիգոր քաջ
հոգևորի ձեռամբ Մկրտիչի» (Ակինեան, Հա-
ւաք, Յիշատ. Հ. Պատուրեանէ)։ Կը խորհիմ
թէ անկէ յառաջ Մինասի օրով 1436-7 հոն

դրուած Ըլլայ Աւետարան մը, թէեւ յիշա-
տակաղբուրեան մէջ կայ «Ի դաւառիս Բա-
լու, Ի վանքս որ կոչի Գէորգ Զաւրավարի»,
զի Բալու Խարբերդէն այնքան ալ հեռու չէ
եւ Բալուի վիճակին մէջ համանուն վանք մը
ինծի անձանթ է :

Ապա 1489ին նոյն Մկրտիչ «Յերկիրս
Խարբերդու ի վանքս որ կոչի Խուլա ընդ
Հովանեաւ Ս. Գէորգայ, Ս. Սարգսի եւ
Կուսին Մարիամու» կը գրէ Մաշտոց մը (Մ-
կրեան, Հաւաք. Յիշատ. անդ, Հ. Պոտու-
րեանէ)։ Ստեփաննոս վարդապետը 1520ին
կ'ուսանի «Ի դաւառիս Բաբերդոյ (սրբադ-
րելի Խարբերդոյ) ի վանս Խուլայ... դար-
հետ գրչութեան եւ զգլորութեան Ս. Գրոց
ամս ԺԲ.» (անդ միեւնոյն աղբիւրէ)։ Գրեթէ
դար մը վերջ 1602ին Մատթէոս կ'արտագրէ
Շարակնոց մը «ի Հոչակաւոր անապատս, որ
կոչի Խուլա վանք» (MacIer, Rapport sur une
miss. scient. էջ 138—40)։

Այս «Գրեցաւ եւ աւարտեցաւ քաղութանս Մատթէոսի Աւետարանն» (1627) ձեռամբ տղերձ եւ լոկ անուն Մատթէոսի, որ չեմ արժանի զանունս եպիսկոպոս Քրիստոս վայելել տայցէ երկար ժամանակաւ եւ առողջ անձամբ: Գրեցաւ սուրբ գիրս ի յերկիրն Սարբերդու, ի վանքն Սուլայ, եպիսկոպոսին» (Ալինեան, Հաւաք. Յիշատ. էջմիածին, Թ. 1302, հմտ. Կարինեանյ Յուլ. Թ. 1285):

Դարձեալ 1481ին Արիստակէս Աւետարան մը կը գրէ «Յաստուածունակ եւ ի հըռ-
շակաւոր վանքս Խոյալու ի գուրս Ս. Գէորգ
պետի» (Թորոս Աղբար, Բ. էջ 444) : Կը կար-
ծեմ թէ՛ Խոյալու վանքը պէտք է սրբա-
գրել Խույալու կամ Խուլու, երբ նկատենք
որ այդ շրջանին սոյն վանքի առաջնորդ է
Գրիգոր Եպիսկոպոս (Հմմտ. վերը) :

Յոտաջ բերուած Յիշատակագրութիւնները յստակօրէն կ'ապացուցեն թէ Ս. Ջան մը եւ ունեցած է արդիւնաւոր ջըրներ: Վիժան գիւղը եպիսկոպոս առաջնորդ վանահայր (Հայկ Վահէ, Խարբերդ քանի մը վանահայրերէն է Գէորդ վարդապետը (1872-1874, հմմտ. անդ էջ 579):

Խարբերդի այս վանքը կը նոյնացուի Մովսիսավանքի կամ Մովսիսանոցի հետ, որով շատ հին վանք կ'ըլլայ, այս է՝ Թ. դարու հաստատութիւնն — զուցէ նոյն իսկ ժամանակ մը Յոյներու ձեռքը եղած։ Այս անունով կնքուած է, վասն զի հիմնադիրը Մովսէս վարդապետը կ'ըլլայ² (հմտ. Ասորիի էջ 175, Չամչեան, Պոմ. Հյց. Բ. էջ 824, հմտ. վերը Վահէ Հայկ Խարբերդ էջ 583-585) :

Գուցէ Չմշկածաղը Խուլափանքի Թեմ
եղած է, ինչպէս ապա Կապան - Մատեն (Վ.
Հայկ, անդ. էջ 550 եւ 554) :

Ս. Գէորգի վանքը ունեցած է թեմա՞ն
 Ժողովուրդ, որբանոց ու աշակերտութիւն,
 Զեռագիր մատեաններ ու սլաակերներ, արթ-
 տալայրեր եւ աշգիներ, զանազան կալուած-
 ներ (Արաքս 1888 թ. էջ 36, Թորոս Աղբար,
 թ. էջ 90 եւ 349-53, Երեւանեան, Պամ. Զար-
 տանձագիր Հայոց, էջ 289, Կիրիկեան Բնաշխ.
 Բորն. թ. էջ 210, Արեւելեան Մամուլ 1884,
 էջ 116 Բիւրական 1899, էջ 225, 253, 282,
 Արարատ 1898, էջ 162, Մասիս 1898 թ. 88,
 Բիւզանդիոն 1904, թ. 2413-4, Արեւելք 1890,
 թ. 2063 եւ 1892, թ. 2673, Նաթանեան,
 Արտօսր Հայաստանի, էջ 126, Տէր Յովհան-
 նէսեան Պամ. Երուսաղէմի թ. էջ 510 - 11,
 Պօղոսեան, Բաղմաշէնի Ընդարձակ Պատ-
 մութիւնը, էջ 178 եւ 181, Նոյեան Աղանի
 1858 թ. 48, ուր Խարբերդի միւս վանքերու
 մասին եւս) :

Տ. Ս. ՄԱՄԱՍԻ ՎԱՆՔԸ

Քէսերիկ (Գաղբիկ կամ Խասրիկ) գիւղէն
կէս մղոն դէպի արեւելք, «Մամառ անուն
լեռան կողքին վրայ հաստատուած է (այս
վանքը) եւ անյիշատակ ժամանակներէ վեր
կը մնայ հոն իբրեւ պատմական հնու-
թիւն: Եկեղեցիին մուտքին շինուած էին
երկու քարակերտ սիւներ: Մէջտեղը կար
մարմարէ քարէ յիշատակարան, լատինական
արձանադրութիւններ անոր վրայ» (Վ.
Հայկ, Խարբերդ, էջ 884): Վանքին նորոգու-
թեան ատեն (1878) պեղումներու միջոցին
երեւան կու դան քառակուսի քարեր՝ լատի-
ներէն շատ հին արձանադրութիւններով:

² Հմմտ. իմ «Կլիբիկոյ վանքերը» (Վիեննա 1957) էջ 259-60, ուր կ'ընդունիմ թէ Մովսիսականը Պար- բեղլի վանքերէն է եւ անոր եպիսկոպոսներէն եղած են Կարապետ (1307) եւ Թորոս (1342):

Ժամանակին եղած է շատ հարուստ վանք եւ ունեցած է ընդարձակ հողեր ու արջառներ։ Սիրուած ուխտատեղի եղած է եւ գուցէ հին տաճար մը եւ Յոյներէ փոխուած եկեղեցւոյ ու վանքի եւ Հայերէն ժառանգուած (հմտ. այս վանքի մասին Վ. Հայկ, անդ էջ 884, Ճիգմէճեան, Խարբերդ, էջ 67 – 8, Բեւզանդիոն 1905, Թ. 2772, Թորոս Աղբար, Բ. էջ 93 եւ փունջ 1880, Թ. 1444)։

Գ. Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔԸ

Զորքորդէ Հայոց մէջ, խարբերդէն ութը
 ժամ հետու, դէպի արեւելեան հարաւ, Տիգ-
 րանակերտ գնալու ճամբուն բերանը, կը
 դտնուի Լճակա (Ծովք), որ բերեմն նշանաւոր
 էր իր պատմական գղեկովն եւ Ս. Նշան
 վանքովը (Էփրեկեան, Բնաշխ. Բօրն. Բ. էջ
 249) : Սիմէոն Լեհային 1609ին կ'այցելէ
 Ծովք եւ կը դըէ «Առի ձիս եւ զիմ զղեստ,
 չուեցի դէպի յԱմիթ, զոր լերամբք եւ մայ-
 բիւք երկու օր ու կէսն հասաք ի Ծով եւ
 կայր ծովուց մէջ գեղ մի Հայոց ի կղզին,
 յորում կայր մասն խաչափայտից, որպէս
 կոչի... Ծովուց Ս. Նշան... գտեալ նաւակ
 մի անցաք ի գեղն եւ մտեալ եկեղեցին, դեռ
 զերեկոյն ժամն կատարէին: Խնդրեցաք եւ
 ցուցին մեզ զսուրբ Նշանն» (Ուղեգրութիւն,
 էջ 202-3) : Եկեղեցին իր յարակից շինու-
 թիւններով դեռ 1850ին կանդուն էր. «Հիմայ
 այս կղզւոյն վրայ Հայոց վանք մի կար, որն
 որ Կէօլճիկոյ Ս. Նշանու վանք կը կոչուի»
 (Եւրոպա 1850, էջ 15) : Բայց աւերակի
 վերածուած եւ մաս մըն ալ լճին ջրերէն
 քերուած եւ նոյն իսկ ծովակուղ եղած (Էփ-
 րեկեան, անդ էջ 249-50 եւ Բիւզանդիոն
 1905 թ. 2772) :

— Դարեւր առաջ — 1478ին — Ի« Ծովքն Ի Ղուռն Ս. Նշանիս, Յովհանն Երէց Կը զրէ Գանձարան մը (Լոյս 1905, էջ 969) : Երկար առեւն Ս. Նշանի մասունքը յարգանքի առարկայ կ'ըլլայ (Տաշեան, Մայր Յուր. էջ 501, 565, 514, 879) :

Բանասէրներու եւ ազգային պատմութեամբ հետաքրքրուողներու միջեւ դեռ մինչեւ այսօր մէջի նիւթ է, թէ հո՞ս հաստատուած էր ժամանակ մը Հայոց կաթողիկոսական աթոռը թէ Մարաշի ու Այնթապի կողմերը (հմմտ. Կրէշէէրեան, Ծովք-Տուրք եւ Հոռմիլայ, Վիեննա 1904, էջ 1-116, Սըրուանձտեանց, Թորոս Աղաք, Ա. էջ Ա-2 եւ

Եւ Բ. Էջ95-101, Էփրիկեան, Բնաշխ. Բորն.
Բ, Էջ 429-31, Խրայեան, Ծովք-Կէօլհիւք, Էջ
32, 42 Եւն, Հայ Խօսնակ 1927 Էջ 156, Հայ-
րենիք Ամսադիր (Բախտիկեան) 1952 Գ. Էջ
61-71, Վահէ Հայկ Խարբերդ, Էջ 586-7, Էջ
759, ուր հմմտ. Էջ 770 Ս. Փրկիչ Եկեղեցին,
Ճիզմէճեան, Խարբերդ Էջ 39-45 Եւ 78, ու-
սումնասիրութիւն մը Հ. Պ. Համալեանէ):

10. ՍՈՐՍՈՐՈՒԻ ԿԱՄ ՍՈՐՍՈՐՈՒԻ Ս. ԳԵՈՐԳԻ ՎԱՆՔԸ

Սարբերդէն մէկ ժամ հետո, Սորսորու
գիւղին մերձ, Ուլ Օվայի մէջտեղը, Ձինչ
Թէփէի բլուրին վրայ կառուցուած է այս
վանքը, (Արաքս 1888, Բ. էջ 36-38) : Միմէոն
Լեհացին կը գրէ «Եւ կայր երեք վանք ան-
վանի, վանք ի յՕվան, մին Սոսուու Ս.
Գէորգ... Եւ Սուրբ Գէորգ, Մկրտիչ վար-
դապետ մի առաջնորդ... սա տեսեալ զիս՝
էառ ի վանքն իւր» (Ուղեգրութիւն, էջ 191) :

«Սորսորի վանքն է փոքրիկ մատուռ մի
յանուն արքայն Գէորգայ, աւելի հնազոյն եւ
անշուք, անյայտ ամ շինութեան նորա, չգտաւ
թուական ինչ ի նմա. տաճարն նսեմ... ունի
զերկուս փայտակերտ դաւիթս անշուք, բնա-
կաբանք թէ առաջնորդի եւ միաբանից երեք:

Հոն գտնուած արձանադրութիւններէն
կը տեսնուի թէ ԺԵ-ԺԶ դարուն այս վանքը
արդէն հիմնուած ըլլայ. այսպէս՝ ԶԼԱ
թուին կը շինուի վանքին դռուը եւ դրան
նեքքին դաւիթին մէջ կանո երկու քարեայ
արձանք, մին՝ յանուն Խաչատուր եւ Գա-
լուստ եպիսկոպոսաց, թվին ՌԺԲ եւ միւսն՝
յանուն Յովսէփ արեղային, թվին ՌԽ» (Նո-
յեան Աղաւնի 1853 թ. 48) : Վանքին չէնքը
հողադիւակէ շինուած է եւ մեծ մասով արդէն
չատոնց քանդուած : Բաղկացած է քանի մը
տձեւ սենեակներէ : Տաճարը նուիրուած է Ս.
Գէորգի :

Քաղաքէն եւ անշուք է, ինչպէս նաեւ՝
մթիւն ու խրթիւն եւ նմանապէս խոնաւ:

Վանքին պարսպին դրսի մեծ դրան ճա-
կատին դրուած քարին վրայ կայ. «Ամին ա-
նեղին Աստուծոյ եւ անմահին շինեցաւ զուռու
ի Թվին ԶԳԱ. (1512) ի փատիչահութեան Շահ
Աբասին, ի հայրապետութեան Տէր Յովս, ով
կարգայք Աստուած ողորմի ասացէք աշխա-
տաւորաց» (Թորոս Աղբար, Բ. էջ 88-9, Վ.
Հայկ, Խարբերդ, էջ 585) :

Այս վանքը իբրեւ թէ «Սարգիս եւ Պետրոս վարդապետներու նախապապը՝ քահա-

նայ մը հիմնած լինելով, ասոնց ցեղին սեպ-
հականույթեան պէս համարուած է» (անդ էջ
88 եւ 336)³:

Զայն վերանորոգած է Պետրոս վարդապետը (Արեւելք 1890, թ. 2063) :

Վանքը ունեցած է առատ ջուր, շատ ու
բարեբեր արտեր ու հասոյթներ, որոնք
ձեռք է ձեռք խլուած են (Ինճիճեան, Նոր
Հայաստան, էջ 237, Մասիս 1879, Թ. 2248,
Արեւելք 1902 Թ. 5110-24, Բիւզանդիոն 1904,
Թ. 2414 եւ 1905, Թ. 2772, Նաթանեան, Ար-
տուր Հայաստանի, էջ 26-7, Վ. Հայկ իար-
բերդ, էջ 585-6, 579, 949-50, Ճիլմէճեան,
Խարբերդ, էջ 39 եւ 67, Բախտիկեան, Ոսկե-
դետակ Գ. էջ 387, Երեւանեան, Պամ. Չար-
սանճագի Հայոց, էջ 282, Թորոս Աղբար Բ.
էջ 87-9 եւ իարբերդի ու անոր վանքերու
մասին հմմտ. Նոյեան Աղանի 1853 Թ. 48,
Արեւելք 1884 Թ. 12, 1886, Թ. 718, 1891, Թ.
2380, 1892, Թ. 2673, Պեղասեան Թռչնակ
1864, Թ. 37 եւ Արաքս 1888 Բ. էջ 35, եւն

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ԼԵԻՈՆ Բ.Ի ՕԺՄԱՆ ԴՐԱՄՆԵՐԸ

Հանդէս Ամսօրեայ Ուսումնաթերթի 1960
Յունուար — Մարտ թուին մէջ, էջ 16-27,
2. Պտուկեան ստորագրութեամբ երեւցաւ
«Կիւիկիոյ Հայ Թաղաւորներու Ոսկեգրամ-
ները» խորագրով գրութիւն մը¹: Մեծ. Յո-
ւ. Սիպիւեանի «Դասակարգութիւն Ռուսներէն
Գրամոյց» (Վիեննա 1892) Հ. Գ. Գալէմքեա-
րեանի յաւելումներն մէջ (էջ 29):

3 Անոր հիմնարկութիւնը թէ. զարուն՝ կը վեր-
բարձրէր, Յարութիւն Վ. Բաղրատունիին (Վ. Հայկ
1 Մեր հիմնարկը)

1 Մեր հիմուտ աշխատակիցին Ջ. Պետուկեանի այլ մարիին նշանակել հոս հետեւեալը: Բոննէն (*Bonn*) հաւաքածոյ մ'ունի, մեզի կը տեղիկազրէ թէ 1959ին, վաճառի կողմէ առուրի հանուած է Լեւոն Աի ոսկեւ գրամ մը: Ա կողմը քաղաւորն գաւի կ'ըյ բազմած, ծանրութիւն 3-4 գրամ եւ գնահատուած միջեւ կրկնաթիւ խաշ: = մոտ 145 դոլար: Վաճառացանկին մէջ ոսկեւգրամի կից ծանօթագրուած է. «Բրիտանական Թագաւորանը (*British Museum*) կը յայտարարէ թէ

Խմբագրություն

Խնդրոյ առարկան է Վիեննայի Միւ-
թարեան Թանգարանի թիւ 1295 սովեզդամբ,
ճանրութիւն՝ 5.30 գրամ :

+ ԼԵՈՆ ԹԱԳԱՆՈՐ .Վ. ՀԱՅ*ՈՑ |

+ ՀԵԹՈՒՄ ԹՍԳՍՈՐ ՀԱՅՈՑ



$\uparrow 0-5 \downarrow$

Յառաջ կը բերենք 2. Պատկերանի խօս-
քերը. «Երբ ուշադրութեամբ քննենք այս
Դրամի Լեւոնի կողմը, կը տեսնենք որ ան
եւած է Լեւոն Ա.ի արծաթ դրամի կնիքէն :
Արդէն նոյն կնիքէն եւած արծաթ դրամը
տրուած է Սիպիւիկանի զբօքի մէջ (Տիւ. 7.
թիւ 11) իւր Լեւոն Ա.ի դրամը» (էջ 22-23) :
Որմէ կը հետեւցնէ, թէ խնդրոյ առարկայ
Դրամը պէտք է ընծայուի Լեւոն Ա.-Հեթում
Ա.ի եւ ոչ թէ Հեթում Ա.-Լեւոն Բ.ի, ինչ-
պէս էլ է Բաղդատի Գ. Գալստիքեարեան :

Հակառակ անոր, որ էր վերադառնալիս Գ. Գալէմբարեանի ուղարկութենէն այս ակըն-
բազի նմանութիւնը — «Ա. կողմը գրեթէ ան-
փոփոխ ընդօրինակութիւնն է Լեւոն Բ (Իմա՛
Լեւոն Ա.)ի արծաթի դրամոյ» (էջ 31) — սա-
կայն ուրիշ տուեալներ պատճառ հանդիսա-
ցած են իրեն աւելի շրջահայեաց կերպով
խնդրին մերձենալու :

Հ. Գ. Գալէմքեարեանի ամէնէն ծանրա-
կշիռ փաստերն են հետեւեալները, որոնք Չ.
Պտուկեանի նկատառութենէն վրիպած կ'երե-
ւին: Գալէմքեարեան կը տրամաբանէ (էջ
30).

Նոյն դրամին վրայ քանի որ երկու թա-
ղաւորներու անուններ կը կարդացուին,
պէտք է ընծայել զայն աշխարհի շրջանի մը,
ուր իրապէս, ըստ պատմութեան, երկու
թաղաւորներ թաղաւորած ըլլան համախոր-
հուրդ, միաժամանակ :

Միասին թաղաւորած են՝

1. Հիթում Բ — Լեւոն Գ.
2. Լեւոն Բ — Հիթում Բ.
3. Հիթում Ա — Լեւոն Բ.
4. Լեւոն Ա. և Հիթում Ա. Հենթում

դաւորած երբեք միաժամանակ, եւ ոչ իսկ անընդմիջաբար, ծանօթ պատմական տուեալներու համաձայն: Կը հետեւի՝ այս ոսկեդրամը Լեւոն Ա.—Հեթում Ա.ի չի՛ կրնար ըլլալ:

1. Հիթում Բ Թազաւոր չուզեց օծուիլ, եւ անոր համար եւ ոչ իսկ արծաթ դրամ կոխել տուաւ, այլ միայն արծաթապղինձ եւ պղինձի դրամ «ուստի եւ բոլորովին անհաւանական է ենթադրելը՝ թէ Թազաւորութենէ վերջին անգամ հրաժարած ժամանակ իւր անուամբ ոսկեդրամ դրոշմել տուած ըլլայ»։ Բաց աստի «Հիթում Բ»-ի դրամոց արուեստն ու տիպն ամենեւին նմանութիւն չունի մեր ասլ դրամոյն հետ» (էջ 30)։

2. «Ձեռք կարող նաեւ Լեւոն Գ.ի (իմա՛ թ.) եւ Հեթմոյ Բ.ի ընծայել թէ՛ վերոյիշեալ պատճառներու համար, եւ թէ՛ այն պատճառաւ՝ որ Լեւոն Գ. (իմա՛ Բ.) մահուան ժամանակ միայն յանձնեց թաղաւորութիւնն չեթմոյ» (էջ 30) :

3. Կը մնայ միայն Հեթում Ա.—Լեւոն Բ :
ա. «Դրամոյն Բ. կողման պատկերը
ճշգրիտ նոյն է Հեթմոյ Ա.ի Հեթում—Ձապել
դրամներուն» (էջ 30) :

բ. Դրամոյն Ա. կողմը աւելի մօտ է արուեստողի եւ ձեւով ի հետն Ա.ի զբամբն-բուն (հմամ, էջ 31) :

դ. «Շատ բնական է, որ սուլթանն էրուհետ դաշնակցութեան առթիւ կրկնանուն դրամ դրոշմել տուող Հեթումն՝ նաեւ նմանօրինակ առթիւ մը նոյնալիսի դրամ դրոշմել տուած ըլլայ»։ Այս առիթն էր Լեւոնի գերութենէ ազատութիւնը, որուն վրայ Հեթումն էր որդին արքայաւայել փառաւորութեամբ թաղաւոր օծել ուղեղ ի'ր իսկ կենդանութեան. «բնական է ենթադրել՝ որ այս հանդիսութեանց չէր պակսեր նաեւ յուշարար օսկեքրամն» (էջ 31) :

Եզրակացութիւն. — Խնդրոյ առարկայ
ոսկեղբամբ՝ եթէ կեղծ չէ՝ իրաւամբ կը
պատկանի

ՀԵԹՈՒՄ Ա.—ԼԵԼՈՆ Բ.Ի

$$L \cap \pi^{-1} \xi$$

Հետոն Ա.—Հեթում Ա. ի

Այս հաստատումներէն ետք հարց մը
կը ծագէ: